

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների աշխատողների կենսաթոշակային ապահովության մասին

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունները, այսուհետ՝
անդամ պետություններ,

ղեկավարվելով իրենց քաղաքացիների կենսաթոշակային ապահովության
բնագավառում հարաբերությունները կարգավորելու ձգտումով,

հիմնվելով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի
մայիսի 29-ի պայմանագրի վրա,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Սահմանումները

Սույն Համաձայնագրի նպատակներով օգտագործվում են
հասկացություններ, որոնք ունեն հետևյալ իմաստը.

բնակության պետություն՝ անդամ պետություն, որի տարածքում գտնվում է
աշխատողի բնակության վայրը.

աշխատանքի տեղավորման պետություն՝ անդամ պետություն, որի
տարածքում աշխատողի համար ձևավորվում կամ ձևավորվել են
կենսաթոշակային իրավունքներ.

իրավասու մարմին՝ անդամ պետության հաստատություն
(կազմակերպություն), որի իրավասության մեջ են մտնում կենսաթոշակային
ապահովության բնագավառում այդ պետության օրենսդրության կիրարկմանն
առնչվող հարցերը.

բնակության վայր՝ աշխատողի բնակվելու վայր, որը, որպես այդպիսին,
որոշվում կամ ճանաչվում է անդամ պետության օրենսդրության
համապատասխան.

կուտակային կենսաթոշակներ՝ Հայաստանի Հանրապետությունում՝

պարտադիր կուտակային կենսաթոշակ, Ղազախստանի Հանրապետությունում՝ ձևավորված կենսաթոշակային վճարների հաշվին միասնական կուտակային կենսաթոշակային ֆոնդից կենսաթոշակային վճարումներ, Ղրղզստանի Հանրապետությունում՝ կենսաթոշակի կուտակային մաս և կուտակային կենսաթոշակային միջոցների հաշվին վճարումներ, Ռուսաստանի Դաշնությունում՝ կուտակային կենսաթոշակ և կուտակային կենսաթոշակային միջոցների հաշվին վճարումներ.

անձնական տվյալների մշակում՝ ցանկացած գործողություն (գործառնություն), որն կատարվում է անձնական տվյալների հետ՝ ավտոմատացման միջոցների կիրառմամբ կամ առանց դրանց կիրառման (ներառյալ անձնական տվյալների հավաքումը, մուտքագրումը, համակարգումը, կուտակումը, պահպանումը, ճշտումը (թարմացումը, փոփոխումը), վերծանումը, օգտագործումը, փոխանցումը (տարածումը, տրամադրումը, հասանելիությունը), ապանձնավորումը, ուղեփակումը, ջնջումը, ոչնչացումը), կամ այդ գործողությունների (գործառնությունների) ամբողջություն.

կենսաթոշակներ՝ սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածի 2-րդ կետում նշված դրամական վճարումները՝ ներառյալ, անդամ պետության օրենսդրության համապատասխան, կենսաթոշակի նկատմամբ սահմանված վճարումները (հավելավճարները) և բարձրացումները.

կենսաթոշակային վճարներ՝

Հայաստանի Հանրապետությունում՝ կենսաթոշակի իրավունք տվող հարկեր և (կամ) այլ վճարներ.

Բելառուսի Հանրապետությունում՝ պարտադիր կենսաթոշակային ապահովագրության ապահովագրական վճարներ.

Ղազախստանի Հանրապետությունում՝ միասնական կուտակային կենսաթոշակային ֆոնդին կատարված կենսաթոշակային վճարներ.

Ղրղզստանի Հանրապետությունում՝ կենսաթոշակային ֆոնդին և Պետական կուտակային կենսաթոշակային ֆոնդին կատարված ապահովագրական վճարներ.

Ռուսաստանի Դաշնությունում՝ պարտադիր կենսաթոշակային

ապահովագրության ապահովագրական վճարներ.

անձնական տվյալներ՝ էլեկտրոնային, թղթային և (կամ) նյութական այլ կրիչի վրա առկա տեղեկություններ, որոնք առնչվում են դրանց հիման վրա որոշված կամ որոշվող անձնական տվյալների սուբյեկտին, և որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն թույլ են տալիս նույնականացնելու սուբյեկտի անձը.

աշխատանքային ստաժ՝ աշխատանքի և (կամ) այլ գործունեության ժամանակահատված (այդ թվում՝ կենսաթոշակային վճարների վճարմամբ), ինչպես նաև կենսաթոշակի իրավունքը որոշելիս և դրա չափը հաշվարկելիս անդամ պետության օրենսդրության համապատասխան հաշվի առնվող այլ ժամանակահատվածներ.

աշխատող՝ անդամ պետության քաղաքացի, որի համար այլ անդամ պետության տարածքում աշխատանքային կամ այլ գործունեություն իրականացնելու միջոցով ձևավորվում կամ ձևավորվել են կենսաթոշակային իրավունքներ.

լիազոր մարմիններ՝ անդամ պետության գործադիր իշխանության մարմիններ, որոնք կարգավորում են կենսաթոշակային ապահովության ոլորտը և (կամ) կանոնակարգում են բժշկասոցիալական փորձաքննություն (համալիր զննում) իրականացնող մարմինների (հաստատությունների) գործունեությունը.

ընտանիքի անդամ՝ աշխատողի հետ ամուսնացած անձ, ինչպես նաև նրա խնամքի ներքո գտնվող երեխաներ և այլ անձինք, որոնք, աշխատանքի տեղավորման պետության օրենսդրության համապատասխան, համարվում են ընտանիքի անդամներ:

Սույն Համաձայնագրում գործածվող մյուս հասկացությունները կիրառվում են «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրով և համապատասխան անդամ պետության օրենսդրությամբ սահմանված իմաստներով:

Հոդված 2

Անձանց շրջանակը և կիրառության ոլորտը

1. Սույն Համաձայնագիրը կիրառվում է աշխատողների և ընտանիքի

անդամների նկատմամբ:

2. Սույն Համաձայնագիրը տարածվում է հետևյալ կենսաթոշակների վրա.

2.1. Հայաստանի Հանրապետությունում՝

1) աշխատանքային կենսաթոշակ՝

տարիքային.

արտոնյալ պայմաններով.

երկարամյա ծառայության.

հաշմանդամության.

կերակրողին կորցնելու դեպքում.

մասնակի.

2) պարտադիր կուտակային կենսաթոշակ՝

անուիտետ.

ծրագրային վճար.

միանվագ վճար.

միանվագ վճար ժառանգներին:

Ընդ որում, պարտադիր կուտակային կենսաթոշակը Հայաստանի Հանրապետությունում նշանակվում և վճարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան:

2.2. Բելառուսի Հանրապետությունում՝

1) աշխատանքային կենսաթոշակ՝

տարիքային.

երկարամյա ծառայության համար (բացի զինծառայողների, նրանց հավասարեցված անձանց, նրանց ընտանիքների անդամների և պետական ծառայողների կենսաթոշակներից).

հաշմանդամության.

կերակրողին կորցնելու դեպքում:

2.3. Ղազախստանի Հանրապետությունում՝

ձևավորված կենսաթոշակային վճարների հաշվին միասնական կուտակային կենսաթոշակային ֆոնդից կենսաթոշակային վճարումներ՝ կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո.

առաջին և երկրորդ խմբերի հաշմանդամություն սահմանելու դեպքում, եթե հաշմանդամությունը սահմանվել է անժամկետ.

միանվագ վճարում ժառանգներին:

2.4. Դրողատանի Հանրապետությունում՝

1) պետական սոցիալական ապահովագրության կենսաթոշակներ՝ տարիքային.

հաշմանդամության.

կերակրողին կորցնելու դեպքում.

2) կենսաթոշակի կուտակային մաս.

3) կուտակային կենսաթոշակային միջոցների հաշվին վճարումներ:

2.5. Ռուսաստանի Դաշնությունում՝

1) ապահովագրական կենսաթոշակ՝ ծերության.

հաշմանդամության.

կերակրողին կորցնելու դեպքում.

2) ապահովագրական կենսաթոշակին ամրագրված վճարում, ապահովագրական կենսաթոշակին ամրագրված վճարման բարձրացում և (կամ) ավելացում և ապահովագրական կենսաթոշակին տրվող լրավճար, եթե սույն Համաձայնագրով այլ բան նախատեսված չէ.

3) կուտակային կենսաթոշակ և կուտակային կենսաթոշակային միջոցների հաշվին վճարումներ:

3. Կենսաթոշակների (նպաստների) մյուս տեսակները նշանակվում և վճարվում են աշխատողի (ընտանիքի անդամի) բնակության պետության օրենսդրության համապատասխան:

4. Սույն Համաձայնագիրը կիրառվում է նաև կենսաթոշակային ապահովության մասին օրենսդրությամբ կարգավորվող հարաբերությունների նկատմամբ, որը փոփոխում և (կամ) լրացնում է սույն հոդվածի 2-րդ կետում նշված դրույթները և չի հակասում Համաձայնագրի նորմերին:

Հոդված 3

Աշխատողների հավասար իրավունքները

1. Աշխատողների կենսաթոշակային իրավունքների ձևավորումն իրականացվում է կենսաթոշակային վճարների հաշվին՝ աշխատանքի տեղավորման պետության քաղաքացիների կենսաթոշակային իրավունքների ձևավորման նույն պայմաններով և նույն կարգով:

2. Աշխատողներին (ընտանիքի անդամներին) կենսաթոշակի նշանակման և վճարման իրավունքի իրացումն իրականացվում է աշխատանքի տեղավորման պետության քաղաքացիների համար կիրառվող նույն պայմաններով:

3. Աշխատողը (ընտանիքի անդամը) իրավունք ունի դիմելու բնակության պետության իրավասու մարմին և (կամ) աշխատանքի տեղավորման պետության իրավասու մարմին՝ կենսաթոշակի նշանակման և վճարման համար:

Կենսաթոշակային ապահովության նպատակով դիմումը և մյուս փաստաթղթերը մի անդամ պետության իրավասու մարմին ներկայացնելու ամսաթիվը համարվում է դրանք մյուս անդամ պետության իրավասու մարմին ներկայացնելու ամսաթիվ:

Սույն Համաձայնագրի իրագործման շրջանակներում իրավասու մարմինների միջև փաստաթղթերի առաքման ժամկետը չի ներառվում կենսաթոշակ սահմանելու մասին դիմումն ուսումնասիրելու և դրա մասին որոշում ընդունելու ժամկետի մեջ:

4. Աշխատողին (ընտանիքի անդամին) կենսաթոշակ նշանակելը և վճարելը չի կարող մերժվել բնակության վայրը մյուս անդամ պետության տարածքում գտնվելու հիմքով, եթե սույն Համաձայնագրով այլ բան սահմանված չէ:

Հոդված 4

Տարածքների հավասարությունը և կենսաթոշակի արտահանումը

1. Իրավասու մարմինները կենսաթոշակները վճարում են նաև աշխատողի (ընտանիքի անդամի)՝ այլ անդամ պետության տարածքում բնակվելու

դեպքում:

Աշխատողը (ընտանիքի անդամը) իրավունք ունի կենսաթոշակ ստանալու բնակության պետության կամ կենսաթոշակը նշանակած անդամ պետության տարածքում:

2. Կենսաթոշակների չափերը չեն կարող նվազեցվել, դրանց վճարումը չի կարող կասեցվել կամ դադարեցվել աշխատողի (ընտանիքի անդամի) բնակության վայրը մյուս անդամ պետության տարածքում գտնվելու հիմքով, եթե սույն Համաձայնագրով այլ բան սահմանված չէ:

3. Սույն հոդվածի 1-ին կետի առաջին պարբերության և 2-րդ կետի դրույթները չեն տարածվում այն վճարումների (հավելավճարների) վրա, որոնք, անդամ պետության օրենսդրության համապատասխան, սահմանվում են աշխատողի (ընտանիքի անդամի) բնակության վայրն այդ անդամ պետության տարածքում գտնվելու հանգամանքը հաշվի առնելով:

4. Ստորև նշված դրամական վճարումները կատարվում են միայն աշխատողի՝ համապատասխան անդամ պետության տարածքում բնակվելու դեպքում.

1) Հայաստանի Հանրապետությունում՝ հիմնական կենսաթոշակը՝ որպես աշխատանքային կենսաթոշակի մաս, և կենսաթոշակներին տրվող հավելումները.

2) Բելառուսի Հանրապետությունում՝ կենսաթոշակի մասը, որը հաշվարկվել է՝ ելնելով օրենսդրության համապատասխան հաշվառված այլ գործունեության ժամանակահատվածներից և (կամ) առանց կենսաթոշակային վճարների վճարման այլ ժամանակահատվածներից, ինչպես նաև կենսաթոշակի նկատմամբ սահմանված հավելումները, վճարումները (հավելավճարները) և բարձրացումները.

3) Ղրղզստանի Հանրապետությունում՝ կենսաթոշակի հիմնական մասը և Ղրղզստանի Հանրապետության բյուջեի միջոցների հաշվին վճարումները.

4) Ռուսաստանի Դաշնությունում՝ ապահովագրական կենսաթոշակին ավելացվող հաստատագրված վճարը,

ապահովագրական կենսաթոշակին ավելացվող հաստատագրված վճարի բարձրացումը և (կամ) ավելացումը և ապահովագրական կենսաթոշակին ավելացվող հավելավճարը, կենսաթոշակային իրավունքների վերագնահատումը՝ դրամական արտահայտությամբ:

5. Անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված հավելավճարները և մյուս վճարումները սահմանելիս հաշվի են առնվում բոլոր անդամ պետություններում աշխատողին (ընտանիքի անդամին) նշանակված կենսաթոշակները:

6. Մի անդամ պետության տարածքից մյուս անդամ պետության տարածք աշխատողի (ընտանիքի անդամի) տեղաշարժվելու դեպքում եթե աշխատողի (ընտանիքի անդամի) կողմից կենսաթոշակի իրավունքն իրացվել է մինչև տեղաշարժվելը, ապա այն վերանայվում (վերահաշվարկվում) է սույն Համաձայնագրի 12-րդ հոդվածի կիրառմամբ: Ընդ որում, սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո ձեռք բերված աշխատանքային ստաժի համար կենսաթոշակի իրավունքը չի վերանայվում:

Հոդված 5

Ընտանիքի անդամի կենսաթոշակի իրավունքը

1. Աշխատողի մահվան դեպքում ընտանիքի անդամն ունի կենսաթոշակի իրավունք՝ անդամ պետությունների օրենսդրության համապատասխան:

2. Կենսաթոշակի իրավունքը որոշելիս, որի չափը, կենսաթոշակը նշանակող անդամ պետության օրենսդրության համապատասխան, կախված է ընտանիքի անդամների թվից, հաշվի են առնվում ընտանիքի բոլոր անդամները:

Հոդված 6

Կենսաթոշակի իրավունքի իրացումը

1. Մի անդամ պետության օրենսդրության համապատասխան կենսաթոշակի նշանակումն ու վճարումը չեն ազդում մյուս անդամ պետության օրենսդրության համաձայն աշխատողին (ընտանիքի անդամին)՝ միաժամանակ այդ և (կամ) այլ տեսակի կենսաթոշակ նշանակելու և վճարելու իրավունքի վրա:

2. Հաշվի առնելով սույն Համաձայնագրի դրույթները՝ կենսաթոշակը նշանակում է անդամ պետության իրավասու մարմինը՝ այդ անդամ պետության օրենսդրության համապատասխան, աշխատողի (ընտանիքի անդամի) կենսաթոշակի իրավունքի ծագման դեպքում՝ անկախ մյուս անդամ պետության օրենսդրության համաձայն այդ աշխատողի (ընտանիքի անդամի) կենսաթոշակի իրավունքը առաջանալու օրվանից:

Հոդված 7

Կենսաթոշակի իրավունքի սահմանումը

1. Յուրաքանչյուր անդամ պետություն կենսաթոշակի իրավունքը որոշում է իր օրենսդրության համապատասխան՝ ելնելով իր տարածքում կուտակած աշխատանքային ստաժից, հաշվի առնելով սույն Համաձայնագրի դրույթները:

2. Եթե մի անդամ պետության տարածքում կուտակած աշխատանքային ստաժը բավարար չէ կենսաթոշակի իրավունքի ծագման համար, ապա հաշվի է առնվում մյուս անդամ պետությունների տարածքներում այդ անդամ պետությունների օրենսդրության համապատասխան կուտակած աշխատանքային ստաժը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նման ստաժը ժամանակի առումով համընկնում է:

3. Ռուսաստանի Դաշնությունում սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան կենսաթոշակի իրավունքը որոշելիս անհատական կենսաթոշակային գործակցի մեծությունը որոշվում է Ռուսաստանի Դաշնության տարածքում, ինչպես նաև նախկին Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության տարածքում կուտակած աշխատանքային ստաժի ժամանակահատվածների համար:

Այն դեպքում, երբ սույն կետի առաջին պարբերության համապատասխան որոշված անհատական կենսաթոշակային գործակցի մեծությունը բավարար չէ կենսաթոշակի իրավունքի ծագման համար, հաշվի է առնվում անհատական կենսաթոշակային գործակցի մեծությունը, որն անդամ պետությունների տարածքում կուտակած աշխատանքային ստաժի 1 տարվա համար հավասար է 1-ի: Ընդ որում, աշխատանքային ստաժի 1 ամիսը կազմում է լրիվ օրացուցային

տարվա գործակցի 1/12-րդ մասը, իսկ 1 օրը՝ լրիվ օրացուցային տարվա գործակցի 1/360-րդ մասը:

4. Որոշակի մասնագիտությամբ որոշակի պաշտոնում կամ աշխատանքային որոշակի պայմաններով և կազմակերպություններում աշխատանքի առնչությամբ կենսաթոշակի իրավունքը մի անդամ պետության օրենսդրության համապատասխան որոշելիս մյուս անդամ պետության տարածքում կուտակած համանման աշխատանքային ստաժը առաջին անդամ պետության տարածքում կուտակած աշխատանքային ստաժին չի գումարվում, սակայն հաշվի է առնվում որպես ընդհանուր հիմունքներով աշխատանքային ստաժ:

5. Սույն Համաձայնագրին համապատասխան՝ կենսաթոշակի իրավունքը, բացառությամբ կուտակային կենսաթոշակի, ինչպես նաև հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային (ապահովագրական) կենսաթոշակների, ծագում է այն անդամ պետության տարածքում կուտակած աշխատանքային ստաժի առնվազն 12 լրիվ ամիսների առկայության դեպքում, որի օրենսդրության համաձայն աշխատողը (ընտանիքի անդամը) հավակնում է կենսաթոշակի նշանակման:

Կուտակային կենսաթոշակի, ինչպես նաև հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային (ապահովագրական) կենսաթոշակների իրավունքը որոշվում է անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 8

Կենսաթոշակի չափի հաշվարկումը

Յուրաքանչյուր անդամ պետություն հաշվարկում է կենսաթոշակի չափը՝ ելնելով իր օրենսդրության համապատասխան ձեռք բերված կենսաթոշակային իրավունքներից և այդ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ հաշվի առնելով սույն Համաձայնագրի դրույթները:

Հոդված 9

Բժշկական զննումը և հաշմանդամություն սահմանելը

1. Հաշմանդամություն սահմանելու նպատակով աշխատողի (ընտանիքի անդամի) բժշկական զննումն իրականացվում է նրա բնակության պետության օրենսդրության համապատասխան՝ ըստ նրա բնակության վայրի:

2. Հաշմանդամության խմբի, ժամկետի և պատճառական կապի (աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության սահմանափակման աստիճանի) վերաբերյալ որոշումներն ընդունում է, այդ թվում՝ հեռակա կարգով, այն անդամ պետության բժշկասոցիալական փորձաքննությունը (համալիր զննումն) իրականացնող մարմինը (հաստատությունը), որի օրենսդրության համաձայն իրականացվում են համապատասխան կենսաթոշակի նշանակումն ու վճարումը:

Անհրաժեշտության դեպքում հաշվի են առնվում մյուս անդամ պետությունների համապատասխան հաստատությունների կողմից տրված տեղեկանքները և բժշկական եզրակացությունները:

Տվյալ որոշումներն ընդունվում են անհատույց հիմունքներով:

Հոդված 10

Անդամ պետությունների համագործակցությունը

1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովն իրավունք ունի անդամ պետություններից պահանջելու սույն Համաձայնագրի կարգավորման առարկային առնչվող տեղեկություններ, ինչպես նաև ընդունելու սույն Համաձայնագրի կիրառության հարցերով առաջարկություններ:

2. Լիազորված մարմինները միմյանց տեղեկացնում են իրենց օրենսդրության մեջ կատարված՝ սույն Համաձայնագրի կիրառության ոլորտին առնչվող բոլոր փոփոխությունների մասին:

3. Լիազորված մարմինները և իրավասու մարմինները փոխգործակցում են միմյանց հետ (այդ թվում՝ Եվրասիական տնտեսական միության ինտեգրված տեղեկատվական համակարգի օգտագործմամբ) սույն Համաձայնագրի իրագործմանն առնչվող հարցերով՝ անհատույց հիմունքներով:

Իրավասու մարմինները հարցմամբ կամ սեփական նախաձեռնությամբ

միմյանց են ներկայացնում անհրաժեշտ տեղեկություններ սույն Համաձայնագրի կիրառության համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին, ինչպես նաև միջոցներ են ձեռնարկում այդ հանգամանքները սահմանելու համար:

4. Իրավասու մարմինները միմյանց տեղեկացնում են այն հանգամանքների մասին, որոնք հանգեցնում են կենսաթոշակի չափի փոփոխման կամ դրա վճարման դադարեցման:

5. Հաշմանդամության հաստատման և կենսաթոշակի իրավունքը սահմանելու, կենսաթոշակ նշանակելու և վճարելու համար անհրաժեշտ՝ մի անդամ պետության օրենսդրության համապատասխան տրված փաստաթղթերը ճանաչվում են մյուս անդամ պետության կողմից՝ առանց այդ մյուս անդամ պետության օրենսդրությամբ սահմանված՝ նման փաստաթղթերի ճանաչման ընթացակարգերն անցկացնելու:

Իրավասու մարմիններն իրավունք ունեն աշխատողից (ընտանիքի անդամից) պահանջելու փաստաթղթերի նոտարական կարգով վավերացված թարգմանությունը կենսաթոշակ նշանակող (վճարող) անդամ պետության պետական լեզվով, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, փաստաթղթերի ստուգման նպատակով ներկայացնելու համապատասխան հարցումներ կամ օգտագործելու տվյալների տեղեկատվական բազաներից օգտվելու միջոցով ստացված տվյալները:

6. Մի անդամ պետության իրավասու մարմնի կողմից աշխատողին (ընտանիքի անդամին) ավել վճարված կենսաթոշակի գումարները, կենսաթոշակի վճարման դադարեցման հետ կապված ինքնուրույնաբար պահում չկատարելու դեպքում, կարող են այդ անդամ պետության օգտին պահվել սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված և այլ անդամ պետության իրավասու մարմնի կողմից վճարվող կենսաթոշակից:

7. Սույն Համաձայնագրի իրագործումն իրականացվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի կողմից հաստատվող՝ լիազոր, իրավասու մարմինների և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միջև սույն Համաձայնագրի կիրառության փոխգործակցության կարգին համապատասխան:

Հոդված 11

Անձնական տվյալները

Անձնական տվյալները փոխանցվում են սույն Համաձայնագրի իրագործման շրջանակներում և հանդիսանում են սահմանափակ տարածման (կոնֆիդենցիալ) տեղեկություններ:

Լիազորված մարմինները և իրավասու մարմինները անձնական տվյալները մշակում են անդամ պետության օրենսդրության համապատասխան:

Հոդված 12

Անցումային դրույթներ

Կենսաթոշակը նշանակվում ու վճարվում է հետևյալ կարգով.

սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո ձեռք բերված աշխատանքային ստաժի համար կենսաթոշակը նշանակվում և վճարվում է այն անդամ պետության կողմից, որի տարածքում է կուտակվել համապատասխան աշխատանքային ստաժը.

սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց առաջ կուտակված աշխատանքային ստաժի համար կենսաթոշակը նշանակվում և վճարվում է անդամ պետությունների օրենսդրության և 1992 թվականի մարտի 13-ի «Կենսաթոշակային ապահովության բնագավառում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների քաղաքացիների իրավունքների երաշխիքների մասին» համաձայնագրին համապատասխան, իսկ Բելառուսի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության համար՝ 2006 թվականի հունվարի 24-ին Ռուսաստանի Դաշնության և Բելառուսի Հանրապետության միջև կնքված՝ Սոցիալական ապահովության բնագավառում համագործակցության պայմանագրին համապատասխան:

Հոդված 13

Լիազոր մարմինները և իրավասու մարմինները

Լիազոր մարմինների և իրավասու մարմինների մասին տեղեկություններն անդամ պետությունների կողմից Եվրասիական տնտեսական հանձնաժողով են

ներկայացվում սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին ծանուցումն ուղարկելիս:

Անդամ պետություններն իրենց լիազոր մարմինների կամ իրավասու մարմինների փոփոխության մասին Եվրասիական տնտեսական հանձնաժողովին տեղեկացնում են մեկամսյա ժամկետում:

Հոդված 14

Եզրափակիչ դրույթներ

1. Սույն Համաձայնագրի մեկնաբանման և (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրով սահմանված կարգով:

2. Անդամ պետությունների փոխադարձ համաձայնությամբ՝ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձևակերպվում են առանձին արձանագրություններով:

3. Սույն Համաձայնագիրը Եվրասիական տնտեսական միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագիր է և կազմում է Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս:

4. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն անդամ պետությունների կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ավանդապահի ստանալու օրվանից:

Կատարված է Սանկտ Պետերբուրգ քաղաքում 2019 թվականի դեկտեմբերի 20-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովում, որը, որպես սույն Համաձայնագրի ավանդապահ, յուրաքանչյուր անդամ պետության կողարկի դրա հաստատված պատճենը:

Հայաստանի Բելառուսի Ղազախստանի Ղրղզստանի Ռուսաստանի
Հանրապետության Հանրապետության Հանրապետության Հանրապետության Դաշնության

կողմից՝

կողմից՝

կողմից՝

կողմից՝

կողմից՝

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2019 թվականի դեկտեմբերի 20-ին Սանկտ Պետերբուրգում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների աշխատողների կենսաթոշակային ապահովության մասին» համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:



Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն